

Ամեն օր կ'ըրատարակուի : - Հատը 20 փարսէ : - Պօլիս բաժանորդ ըլլալ ուղորդ մէկ արծաթ Մէճիտ պիտի վճարէ 100 թուոց համար , խկ գաւառաց համար 25 դրը գարձեալ 100 թուոց համար , թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : - Կանուցման տողը 40 փարսայ է մէկ անգամի համար : - Լրագրիս վերաբերեալ նամակ և ուրիշ որ և է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի կ . Պօլիս Չաղմածըրար Եօգուշու Չիւմայիւլլի . խան վերի յարկ թիւ 24 սենեակը :

Ա Չ Գ Ս Յ Ի Ն

Ասկէց մէկքանի շաբաթ յառաջ բերիլութեամբ ծանուցինք թէ՛ Երուսաղիմայ Պատրիարքական կառավարութիւնը մտադիր է իւսկիւտարի Եէնիմահայլէի վարժարանը գարձեալ դիշերութիկ ճեմարանի մը փոխել , եւ թէ՛ դեր Միմնն եպիսկոպոս շէնքը աչքէ անցուցած ըլլալով , անոր նորոգութեան վերաբերեալ տեղեկութիւններ ընդունելու ելած է : Մեր այս հրատարակութիւնը շատերուն ուշագրութիւնը գըրաւած ըլլալով , մեզի կհարցունեն թէ արդարեւ Երուսաղեմայ վանքը այսպիսի հաստատութիւն մը պիտի ընէ՞ , կամ թէ՛ երբ պիտի սկսուի : Ուսումնասէր ազգայնոց այս հետաքրքրական հարցմունքն որոց չեմք կրնար ինքնին պատասխանել , Երուսաղիմայ ամեն . Ս . Պատրիարք Հօր եւ վանական պատուարժան Ուխտին ուշագրութեան յանձնել արժան կհամարիմք :

Մայրաքաղաքիս մէջ հասարակաց համար գիշերօթիկ վարժարանի մը հաստատութեան պէտքը խիստ զգալի եղած է եւ առ այժմ՝ ուրիշէ յոյս չկայ , բայց եթէ՛ Երուսաղեմէն որ ինքնայօժար կտեսնուի առ այս : Գեր . Սիմնն եպիսկոպոսէն յատկապէս կինդրուի որ բարեհաճի փոյթ տանել որ յառաջ այս կարեւոր գործը սկսելու , եւ հասարակաց այս բաղձանքը ի գլուխ տանելու : Հաւատի եմք թէ՛ երբ Երուսաղէմ սկսի , ուսումնասէր անձինք ալ կօղնեն եւ բոլորովին առանձին չեն թողուր զինքը : Անուրանալի է որ հիմայ ուսումնասիրութեան տեսնն այնչափ չէ , ս'ըչափ էր

ճեմարանի նախկին հաստատութեան ատեն շատերը յականէ յանուանէ կճանչնամք որ ազգային բարեկարգ վարժարան կինտուեն , իրենց որդիքն օտար վարժարաններ զրկելէ դադրելու համար : Խաղաղի Շահնաղար-Նուպար գիշերօթիկ վարժարանը աչքերնուս առջեւ է . հոն ուսանողաց մեծագոյն մասը թոշակաւոր են եւ լիաթոշակ . անոնց հետ կրնան բազմաթիւ ազքատ տղայք ճրիաբար ուսումն անուլ , եթէ այսպէս որոշուի ուսկից անկէ : Եւ ահա իւսկիւտարի ճեմարանը բացուելով կըրնայ մեծապէս օգտակար ըլլալ Ազգին : Անդին ասդին դանուող հարուստ ուսանողք հոն կհաւաքուին , անոնց հետ շատ աղքատներ ալ կդաստիարակուին , եւ հետեւաբար չեմք կարծեր որ վարժարանը այնչափ ծանրանայ Երուսաղիմայ վրայ՝ ծախուց կողմանէ :

— Քաղաքական ժողովը Սերաստիոյ Պետրոս վարդապետին յանձնարարութիւն ըրեր է որ , Սերաստիոյ Ս . Նշան վանուց վիճակին վրայ մանրամասն տեղեկագիր մը խմբագրելով ազգային վարչութեան ներկայացունէ : - Կյուսամք թէ Քաղաքական ժողովոյն այս յանձնարարութիւնը կատարուելով քիչ օրէն կրնանք տեղեկութիւն ունենալ եւ հաղորդել ընթերցողաց :

— Երէկ լսեցինք թէ՛ իւսկիւտարի Ս . Խաչ թագլի նորընտիր Խորհրդոյ անդամներէն Պէհզաս Ումէտ աղային անստորագիր գիր մ'ուղղուեր է տեղական թղթատարութեան միջոցաւ , որով սպառնալիք կըլլայ եղեր խայտառակելու վճանել զինքը՝ եթէ առաջիկայ կիւ-

րակէ օրը խորհրդարանը գտնուի : - Այս գիրը ի հարկէ օրինաւորութեան փափաքող մէկու մը գործ ըլլալու չէ . օրինաւոր պահանջում մը յայտնի կերպով կըլլայ . ճշմարտութեան հետամուտ եղող անձն մութի մէջ չգործէր : Եթէ Ռւմէտ աղան իւր անցեալ պաշտօնատարութեանց մէջ ըստ արժանւոյն վարուած չըլլալով այժմ թաղական խորհրդակախոսութեան անարժան է , անոր դէմ բողոքելու համար ուրիշ շատ օրինաւոր միջոցներ կան :

Այս գիտողութիւնը կրնեմք , չէ՛ թէ Ռւմէտ աղային պաշտպանելու , այլ օրինաւորութեան ճամբան ցուցնելու նըպատակաւ , ինչպէս մեր պարսաւորութիւնը կ'պահանջէ :

— Մէծմուսլը — Հաւատաւոր կհաւաստէ թէ՛ Պէյօղլուի հրդեհէն մինչեւ այսօր Հասունեանց կողմանէ 529 անձինք աւերցած են Հակահասունեանց արձանագրութեան տոմարին մէջ , երբէք յորդոր կամ բռնութիւն չըլլալով վարչութեան կողմանէ :

Յիշեալ լրագիրը այս լուրը տալէն յետոյ հարցմամբ կ'յաւելու թէ՛ Սէտան այս լուրն ալ ստելու քաջութիւնը կրնայ ունենալ :

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Բ Ե Ր

Եղիպտոսի բարձր . Խտիվը Ազեկասանդրիայէն ճամբայ ելած ըլլալով կը յուսացուի թէ այսօր կամ վաղը մայրաքաղաքս կհասնի : Ասկէց կրնայ մահարեւուիլ թէ՛ Բ . Դրան եւ Եղիպտոսի իշխանութեան մէջ համաձայնութիւնը բոլորովին վերահաստատուած է :

Յայտնի է թէ՛ այս իշխանութիւնը ժամանակէ մ'ի վեր կաշխատի հիւպատոսաց դատատանական իրաւասութիւնը սահմանադրել : Վերջին օրերս կրտուի թէ այս խնդիրը շատ ծանր յառաջ կերթայ , եւ Փարիզի մէջ նոր դրժուարութեանց պատահած է :

— Ամսոյս 12 ին Գահիրէի մէջ թեթեւ եւ անվնաս գետնաշարժ մը տեղի ունեցեր է :

— Մայրաքաղաքիս աւողջական ժողովին ծանուցման նայելով Պէյօղլուի վերջին հրդեհին ատեն այրող ու անյայտ եղող անձանց թիւը 350 էն աւելի չէ եղեր :

— Բարձր . Մեծեպարքօրը երէկ կայսերական պալատը երթալով՝ պատիւունեցաւ Օզոսա . Մուլթանին ներկայանալու եւ տեսակցելու :

— Եղիպտոսի բարձր . Խտիվը մէկ քանի օր միայն մայրաքաղաքս կենալէն յետոյ , Գաղղիա հանքային ջուրերը մանելու պիտի երթայ եղեր :

— Լոնտոնէն Հնդկաստան Եղիպտոսի ճամբով ներքնածովեան հեռագրական թել մը հաստատուելով յարարեւութիւններն սկսուեր են : Այս ճամբով Հնդկաստանէն Լոնտոն հինգ վայրկեանի մէջ լուր կառնուի կրտուի եղեր : Անգղիոյ թագուհւոյն գահաժառանգ իշխանը հեռագրով յատկապէս շնորհակալութիւն մատուցեր է Եղիպտոսի բարձր . Խտիվին : — Ամերիկայի Հասարակապետութեան Նախագահին կողմանէ ալ Հնդկաստանի կառավարչին շնորհակալութիւն ընծայուեր է , Հնդկաստանէն Ամերիկա 40 վայրկեանի մէջ լուր առնուելուն համար , որ 3500 ժամու ժամաբայ է :

— Հերսէքի գաւառին Մուսթար գիւղաքաղաքին մէջ մինչեւ հիմա նմանը չտեսնուած անթիւ մարախ տեղացեր է հեղեղի պէս : Տեղական կառավարութեան կողմանէ ամեն կողմ մարդիկ հանուելով՝ ամեն ջանք եղեր է զանոնք ջնջելու համար . փոսեր փորուելով մէջը նետուեր են , որ 40000 օխայի չափ կը հաշուեն :

— Նոր հաստատուիք Ազիզիէ անուն չոգենաւուց ընկերութեան կանոնադրութեան խմբագրութիւնը աւարտած ըլլալով երէկ առեւտրական գործաց պաշտօնատունը ժողով մ'եղաւ վսեմ . Ֆազիլ Մուսաաֆա փաշայի նախագահութեամբ , որուն առաջաբկութեան վրայ կհաստատուի ընկերութիւնը : Կլեմէք թէ՛ այս ընկերութեան մէկ բաժինը քսան լիրա ըլլալով յիսուն հա-

դարձրածին պիտի ըլլայ, եւ Յէվոյիտի ընկերութեան ընտիր շոգենաւներն 7500 բաժինի տեղ պիտի առնուին, եւ մնացեալ բաժինները հասարակաց պիտի ծախուին :

— Ռուսիոյ մէջ երեւելի սեղանաւորներէն ալ վաճառականներէն ոմանք միաբաներ են կառավարութեանէն թոյլտուութիւն խնդրելու համար որ « Ս. սիոյ վաճառականական եւ շոգենաւուց » անունով ընկերութիւն մը կազմեն : Այս ընկերութեան գրամագլուխը 2 միլիոն 400 հազար գարպոն պիտի ըլլայ : Փոխադրութեան համար շոգենաւներ պիտի շինել տան, եւ մինչեւ Ս. սիոյ խորերը պիտի տարածեն վաճառականութիւնը : Շոգենաւներն պատերազմի ատեն դորձածուելու յարմար կերպիւ պիտի շինուին : կառավարութեան կողմանէ այս ընկերութեան միանգամայն արտօրութիւն արուած պիտի ըլլայ Ս. սիոյ ծովեզերքը դանուած հանքերը բանեցունելու :

— Կլեւեք թէ՛ Պէյօղլուի հրդեհէն ետեւ մասնաժողով մը կազմուած է, տուն շինելու համար Անգղիոյ եւ Գաղղիոյ մէջ դորձածուած եղանակը շուտով սովորելու եւ սյրած սեղերն ըստ այնմ շինել ապու համար :

— Անցեալ տարի ճապայի բնակիչներէն 138 մարդիկ կսիրողիւններէն գիշատուեր են :

— Կերեւայ թէ՛ Սպանիացիք վերջապէս պիտի յաջողին մօտերս թագաւոր մ'առնենալու : Կըսուի թէ Երուսիոյ թագաւորին ազգական իշխանի մը առաջարկուեր է թագաւորական դահը, եւ կկարծուի թէ՛ պիտի ընդունուի :

— Անգղիոյ արտաքին գործոց հանգուցեալ պաշտօնէին Լորա Կրանվիլ յաջորդեր է, ինչպէս արդէն գուշակուած էր :

— Անգղիոյ մէջ սովորութիւն է ամեն տարի աղքատաց վերաբերեալ վիճակագրութիւն մը հրատարակել : Ներկայ 1870 տարւոյս վիճակագրութիւնը երեւան ելած ըլլալով անկէջ կիմացուի թէ բոլոր Անգղիոյ մէջ 169471 աղքատ

կգտնուին, որոնց համար կառավարութեան կողմանէ յատկապէս տեղեր որոշուած են եւ ուտելիք կրարուի : Ասոնցմէ զատ 915720 աղքատ մարդիկ ալ կան, բայց անոնք իրենց համար բնակարան ունին եւ աշխատութեամբ կըրնան իրենց ոգեւորահիլը ճարել :

— Գաղղիական լրագրաց մէկուն գըրածին նայելով, Ռուսաց Աղեկասնդր կայսրը օգոստոս ամսոյն մէջ Տփլիս պիտի դանուի, ուր պիտի տեսնուին Պարսից Շահին հետ, — Շահը Կասպից ծովու ճամբով Ռուսաստան պիտու անցնի եւ կոստանդին արշիլքսին հրամանատարութեան ներքեւ փոքրիկ նաւատորմիդ մը հետը պիտի դանուի :

Յիշեալ քաղաքին մէջ այս պատճառաւ արդէն պատրաստութիւններ կըլլան եղեր :

— Մուսօ - վալաքիոյ կարողոս իշխանին սպանուած ըլլալուն կեղծ լուրը փարիզի Պորսպին մէջ ալ սարածուելով բաւական փաստաց պատճառ եղած է մինչեւ որ կեղծ ըլլալը լմացուեր է : Յայտնի է թէ այս լուրը մայրաքաղաքէս հազորդուած է :

ՏԵՂԱԿԱՆ ԹՂԹԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Երկրորդ անգամ այս հաստատութիւնը եղած ատեն, կյուսայինք որ մայրաքաղաքիս հեռաւոր կողմերը լրագրաց փոխադրութեան համար ալ դիւրութիւն պիտի ըլլայ, բայց մեր այս յոյսն պարապը ելաւ, որովհետեւ փունջի մէկ թերթին համար 10 փարսայ կարահանջուի թղթատարութեան կողմանէ : Անցեալ հինգշաբթի օրը Պէպէք մեր մէկ բաժանորդին ուղղուած էրեք թերթի վրայ 10 փարսայի բուլ փակուցած եւ թղթատուն զրկած էինք, հետեւեալ օրը դորձակալ մը գալով թերթերը ետ բերեր եւ 20 փարսայ ալ առնելէն յետոյ տարեր է : Փունջի ամեն մէկ թերթին համար եթէ 10 ական փարսայ մճարել հարկ ըլլայ, յայտնի է թէ հրատարակիչն համար չէ թէ շահ այլ փաստ է : Եթէ այս մտախն սխալ մը

չկայ, եւ եթէ այսպէս հաստատ որոշուած է, տեղական թղթատարութեան ձեռօք լրագիր փոխադրելը անհնար կըլլայ: Այս դիտողութիւնը խոնարհաբար մատուցանելով թղթատարութեան մեծապատիւ վերատեսչին, կիսնդրուի որ այս մասին նոր անօրինութիւն մը ընել բարեհաճի, եթէ կարելի է: Յայտնի է թէ՛ լրագրաց փոխադրութեան ծախքը եթէ թեթեւ ըլլայ, շատ լրագիրներ տեղական թղթատարութեան միջոցաւ կղրկուին, որով թէ՛ թղթատարութիւնը կշահի եւ թէ՛ լրագրաց դիւրութիւն կընծայուի:

Մայրաքաղաքս գտնուող թողատցի պատուարժան ազդեցնոց կողմանէ երէկ սրատղամաւորութիւն մը ներկայանալով խնդրեցին Քաղ. ժողովին որ թողատէն եկած հանրագրութեանց համեմատ հրաման ըլլայ որ քուէարկութեամբ քաղաքական ժողով մ'ընարուի թողատի համար, եւ ժամանակէ մ'ի վեր տեղի ունեցած անկարգութեանց վերջ արուի: Ժողովը նկատելով թէ այս խնդիրը թողատցուոց կողմանէ շատ ժամանակէ հետէ՞ կլուի, որոշեր է կատարել եւ պէտք եղած գրերը յանձնել: Կյուսամբ թէ՛ այսպէս կխորտակուին քանի մը էֆէնտիներու տիրապետութեան բազուկները, եւ թողատ կհանդարտի:

Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն

Տակաւին առ հասարակ ցրտութիւն մը կտիրէ Տաճկաստանի ներքին բերքերուն վրայ: Առ այժմ Պօսոյ մանր մուր առեւտուրները գրեթէ սա հետեւեալ ասորանաց վրայ են: ԲՍՄՊԱԿ. -- Գինն է Կիւրճի 9 դր: Ատանա կամ թէրուս 10-10 ուկէս դրու: ԲՈՒՐԴ. -- Լուսցուած աղէկ տեսակը բաւական կը բնառուի. գինն է 11-11 ուկէս դր: ՃիւլՐԻ. -- Կեսարիոյ եւ Գաղատիոյ աղէկ տեսակը 16 դր: Եւզակիոյ 15 դր -- Չօրում 14 ուկէս դր: շատ կուզուի եւ այս տարի շատ քիչ է հունձը:

ՄԱԶԻ. -- Կարնոյ եւ Սըլբրդի աղէկ տեսակը սեւա 11-11 ուկէս դր: սպիտակ 7 ուկէս 8 դր: քիչ շատ կը ծախուի: ԱՅՅԻ ՄՈՐԹ. -- Աղէկ տեսակը Գաղատիոյ՝ Չօրումի եւ Եօզղատի 9-10 հասը մէկ ոսկի օսմանեան. մանր մուր ծախքերը պակաս չեն: ՔԻԹՐԷ. -- Հրապարակը վերջին աստիճան թոյլ է, խիստ աղէկ տեսակը 28 դր միջին 22-24, ստորին 15-18 ուկէս դր: սոնոյ չկայ, ծախող շատ: ՊԱԼՄՈՄԻ. -- Բաւական թուրութիւն կը տիրէ հրապարակը. քիչ շատ կհարցուի, գինն է խիստ աղէկ տեսակը 25 դր: ԿՈՎԻ ՄՈՐԹ. -- Կերեւայ որ այս տարի շատ աղէկ պիտի ծախուի. ուղղներ շատ են. Կեսարիոյ՝ Գաղատիոյ և վրաստանի աղէկ տեսակը 11 դր: Յիշեալ գիները Օսմանեան վրան 100 դրէի հաշուով են: Միւս ասորանքները բնաւ հարցնող չկայ, առեւտուրները խիստ թոյլ են:

ԿՐԹՈՒԹԻՒՆ ՏԱՃԿԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ

Խ Մ Բ Ա Գ Ի Բ Ա Յ
ՊՕՂՈՍ Պ • ԳԱԼԸՊՃԵԱՆ
Գին 10 դր

Միւհէնտիսեան տպարանի տաճկական նոր տնուերով տպուած այն գասադիրքը ամեն հայ գրաւիճառաց քով կը գտնուի, որ կը պարունակէ Օսմանեան տառերուն զօրութեան ու կցորդութեանը կանոնները. արդի սնով գործածական այլ եւ այլ գրութիւններ, Օսմանեան լեզուի մէջ գործածուած Արարեբէն համաձայնութեան կանոնները օրինակներով հանդերձ. կառախարութեան պաշտօնական տեղերն ու արիւղոնները, եւ գեղեցիկագրութեան վարժութիւն ըլլալու համար պարունակած գրութեանցը ձեռագիր կրկնութիւնը:

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ • Ս • ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԳՐԱՆԻԿ ՎԱՐԳԱՆԵԱՆ
Կ • ՊՕԼԻՍ ԶԻՄՊՈՒՂԻԻ ԽԱՆ ԹԻՒ 24